Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն N02

Բյուրեղավանի համայնքի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող աշխատանքային խմբի (այսուհետ աշխատանքային խումբ) նիստի

«25» ապրիլ 2024թ                                                                                    ք. Բյուրեղավան

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի վարչական շենքի, 1-ին հարկի թիվ 2 սենյակում, մասնակցությամբ՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող աշխատանքային խմբի նախագահ՝ Նորայր Շուշանյանի (Բյուրեղավան համայնքի աշխատակազմի վարչական իրավախախտումների գծով իրականացվող աշխատանքների պատասխանատու), աշխատանքային խմբի անդամներ՝ Վոլոդյա Հայրապետյանի (Բյուրեղավան համայնքի Բարեկարգում և կանաչապատում ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ), Անդրանիկ Եղիազարյանի (Բյուրեղավանի համայնքապետարանի քաղաքաշինության հողաշինության գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ) և աշխատանքային խմբի քարտուղար՝ Վարուժան Մարտիրոսյանի (Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ) քննության է առնվում գույքահարկի գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ 21.02.2024 թվականի կանչագրի հիման վրա 13.03.2024 թվականին հարուցված վարույթը:

Վարչական վարույթին հարկատու՝ Մանուշակ Ղազարյանը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված էր:

Քննարկվում է Բյուրեղավան համայնքում գրանցված սեփականության վերաբերյալ միասնական գույքահարկի գծով (2021թ.-ից սկսած)՝ 121843 ՀՀ դրամ, որից՝ 107536 ապառք 14307 տույժ, և հողի հարկի գծով (մինչև 2021 թվականը) 230450 որից՝ 154609 ապառք, 75841 տույժ, շինության՝ բնակելի տան գույքահարկի գծով (մինչև 2021 թվականը) 1223111 որից 812144 ապառք, 410967 տույժ ընդհանուր՝ 1575404 ՀՀ դրամ հարկային պարտավորությունների հարցը:

Աշխատանքային հանձնաժողովը որոշեց առաջարկություն ներկայացնել համայնքի ղեկավարին ղեկավարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ Հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-61-րդ հոդվածներով Մանուշակ Ղազարյանից հօգուտ Բյուրեղավան համայնքի բյուջեի գանձել 1575404 ՀՀ դրամ /ապառ՝ 1074288 ՀՀ դրամ, տույժ՝ 501115 ՀՀ դրամ/, որպես Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Կոտայք փողոց 1ա հասցեում սեփականության իրավունքով նրան պատկանող անշարժ գույքի /հողամասի և բնակելի տան/ համար վճարման ենթակա հարկի գումար:

վարչական իրավախախտումների գործերը քննող աշխատանքային խմբի մասնակից անդամների հետևյալ ձայների բաշխումով Կողմ 3 Դեմ 0 Ձեռնպահ 0

Հայտարարվեց որոշման գանգատարկման կարգն ու ժամկետները:

**Նախագահող՝**

Ն. Շուշանյան

**Աշխատանքային խմբի անդամներ՝**

Վ. Հայրապետյան

Ա. Եղիազարյան

**Քարտուղար՝**

Վ. Մարտիրոսյան